իրանց հարկաւոր է, գրքերիցն էլ կամեցել են, որ մենք օգուտ քաղենք։

Քրդերի արածը թէև անգիտակցաբար, գողութեամբ, բայց մի բողոք է «Գրքերի հրատարակող Ընկերութեան» դէմ, որ մինչև այժմ անսնունդ թարգմանութիւններով է կերակրել մեր անսովոր ստամոքսները և մենաւաճառութեան տակ է դրել «Դաւիթ-Բէկի» երրորդ հատորի տարածումը։

Եթէ այդ սարի առաքեալներին մի օր յաջողուէր գրավաճառանոցները մտնել, կամ անդամ դառնալ «Գրքերի հրատարակող Ընկերութեան» այն ժամանակ մենք արժան և օգտակար գրքեր կունենայինք։

Այդ կողմերում եղած բոլոր ցեղերի մէջ իւրեանց աղանդովը, աշխատասիրութեամբ, պարապմունքներով, հարստութեամբ, թւով նշանաւոր են Գարայ—Գոյունցիք։ Դոքա մօտ երկու հազար տուն են և բնակվում են մեծ մասամբ Աւարայր գաշտի հիւսիսակողմը։ Թաթարները դրանց անուանում են «Ալ—ալլահի» (Ալուն Աստուած ընդունողներ) և «Զրա—սօնդիւրան» (Ճրագ փչողներ)։ Սոցա աղանդը երիստո—կրակապաշտական մի խառնուրդ է։

Գարա—Գոյունցոց գիւղերումը մնացի մի քանի օր և որքան կարելի էր աշխատեցի ծանո-